

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2023

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ
ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սնագրության համար:

1 Ո՞ր դեպքում է կիրառվում գծիկային գիծը.

- 1) չափագծերը պատկերելիս
- 2) տեսանելի ուրվագծեր պատկերելիս
- 3) անտեսանելի ուրվագծեր պատկերելիս
- 4) առանցքային գծեր պատկերելիս

2 Արտաքեր գծերը և չափագծերը գծվում են.

- 1) գծակետային գծով
- 2) բարակ հոծ գծով
- 3) գծիկային գծով
- 4) հիմնական հոծ գծով

3 Չափաթիվը գրվում է ձախ կողմից, եթե.

- 1) չափագիծը դասավորված է պրոֆիլային հարթությունում
- 2) չափագիծը դասավորված է ֆրոնտալ հարթությունում
- 3) չափագիծը դասավորված է հորիզոնական
- 4) չափագիծը դասավորված է ուղղաձիգ

4 Շառավղի չափաթվի առջև դրվում է.

- 1) R տառը
- 2) D տառը
- 3) K տառը
- 4) M տառը

5 Մեծացման մասշտաբ է.

- 1) 3 : 1
- 2) 2.5 : 1
- 3) 1 : 2.5
- 4) 1 : 3

6 Գծագրական թղթի եզրերից ի՞նչ հեռավորության վրա է գծվում շրջանակը.

- 1) ձախից-25մմ, վերևից, աջից և ներքևից 10-ական մմ
- 2) ձախից, վերևից, աջից և ներքևից 5-ական մմ
- 3) ձախից, վերևից, աջից և ներքևից 10-ական մմ
- 4) ձախից-20մմ, վերևից, աջից և ներքևից 5-ական մմ

7

Առարկայի մտովի բաժանումն առանձին մասերի անվանում են.

- 1) երկրաչափական ձևի վերլուծություն
- 2) փոփոխություն
- 3) երկրաչափական պատկերի կառուցում
- 4) էսքիզ

8

Չուգահեռ պրոյեկտման դեպքում բոլոր պրոյեկցիաները ստացվում են.

- 1) 45° թեքությամբ
- 2) բնական մեծությամբ
- 3) բնականից մեծ
- 4) 90° թեքությամբ

9

Կտրվածք է կոչվում այն պատկերը, որը.

- 1) ստացվում է Չուգահեռ պրոյեկտումից
- 2) պարզաբանում է առարկայի ներքին հատույթները
- 3) պարզաբանում է առարկայի ներքին ձևը
- 4) ստացվում է կենտրոնական պրոյեկտումից

10

Կտրվածքներում գծապատումը կատարվում է.

- 1) 90° անկյան տակ
- 2) 30° անկյան տակ
- 3) 45° անկյան տակ
- 4) 60° անկյան տակ

11

Ինչպե՞ս է անցնում կտրող հարթությունը՝ հատակագիծը շինարարական գծագրի վրա ցուցադրելու համար.

- 1) առաստաղից անմիջապես ներքև
- 2) պատուհանագոգերի մակարդակից մի փոքր վերև
- 3) պատուհանագոգի մակարդակով
- 4) առաջին հարկի հատակի մակարդակով

12

Ծառի ո՞ր տեսակը սաղարթավոր չէ.

- 1) հացենի
- 2) կաղնի
- 3) մայրի
- 4) հաճարենի

13 Օտոի բնի հիմնական հատույթները լինում են.

- 1) լայնական, շառավղային, տանգենցիալ
- 2) շառավղային, տանգենցիալ
- 3) լայնական, շառավղային, եզրային
- 4) շառավղային, եզրային

14 Սդոցանյութի ո՞ր տեսակին են անվանում չորսվակ.

- 1) որի լայնությունը երկու և ավելի անգամ մեծ է հաստությունից
- 2) որի լայնությունը և հաստությունը մեծ են 100 մմ-ից
- 3) որի հաստությունը փոքր է 100 մմ-ից, իսկ լայնությունը չի գերազանցում հաստության կրկնապատիկը
- 4) որը ստացվում է գերանը երկայնական ուղղությամբ չորս հավասար մասերի բաժանելով

15 Գործողություն, որի ժամանակ փայտե դետալներին տալիս են համապատասխան ձև, ճշգրիտ չափեր և անհրաժեշտ մաքրություն.

- 1) խարտոցում
- 2) ռանդում
- 3) սղոցում
- 4) շաղափում

16 Մշակված մակերևույթի որակը համարվում է բավարար, եթե.

- 1) քանոնի եզրը՝ երկայնական, լայնական ուղղություններով և եզրերով, առանց բացակների կիպ հպվում է մշակված մակերևույթին
- 2) մշակված մակերևույթը փոխուղղահայաց է նախապատրաստվածքի եզրին
- 3) քանոնի եզրը՝ երկայնական, լայնական ուղղություններով և անկյունագծերով, առանց բացակների կիպ հպվում է մշակված մակերևույթին
- 4) մշակված մակերևույթը փոխուղղահայաց է նախապատրաստվածքի ճակատին

17 Ի՞նչ է շպոնը.

- 1) փայտի բարակ շերտ, որը ստացվում է սղոցման կամ թործման միջոցով
- 2) սալիկներ, որոնք ստացվել են շոգեխաշած և մանրացված փայտի ամենափոքր մանրաթելերի մամլման միջոցով
- 3) սալիկներ, որոնք ստացվել են թեփի, տաշեղների և փայտի փոշուց
- 4) փայտի բարակ շերտ, որը ստացվում է ռանդման կամ ծլեպման միջոցով

18

Ի՞նչ գործիք են օգտագործում նախապատրաստվածքի վրա չափանշման գուգահեռ գծեր քաշելու համար.

- 1) խազքաշ
- 2) անկյունարդ
- 3) անկյունաքանոն
- 4) կարկին

19

Ինչպիսի՞ ձևի ատամներով սղոց են օգտագործում փայտանյութի երկայնական կտրման համար.

- 1) կոբ
- 2) ուղիղ
- 3) մեծ թեքությամբ
- 4) փոքր թեքությամբ

20

Ի՞նչ է չափրաստումը.

- 1) սղոցի ատամների գագաթների հավասարեցումն է ուղիղ գծով
- 2) սղոցի ատամների սրումն է
- 3) սղոցի ատամների թեքումն է հերթականությամբ տարբեր կողմեր
- 4) սղոցի ատամների ուղղումն է

21

Ինչպե՞ս են անվանում փայտի վերջնամշակման համար նախատեսված թործիչ գործիքը.

- 1) նրբառանդա
- 2) ռանդա
- 3) ֆուգան
- 4) իզմիր

22

Ի՞նչ է նշվում տեխնոլոգիական քարտում.

- 1) փայտանյութի տեսակը, գրաֆիկական պատկերը, գործիքները և հարմարանքները
- 2) գործողությունների կատարման հաջորդականությունը, գրաֆիկական պատկերը, գործիքները և հարմարանքները
- 3) արտադրանքի տեսակը, գրաֆիկական պատկերը, գործիքները և հարմարանքները
- 4) գործողությունների կատարման հաջորդականությունը, գրաֆիկական պատկերը, չափանշման եղանակները

23

Ինչպե՞ս է կոչվում փայտը 45° և 90° անկյան տակ սղոցելու հարմարանքը.

- 1) անկյունասղոցման արկղ
- 2) հենակ
- 3) անկյունասղոցման ուղղորդ
- 4) ռեյսմուս

24

Նախապատրաստվածքի ավելցուկային շերտը, որը կտրող գործիքով պետք է հեռացվի հետագա մշակման ընթացքում, անվանում են.

- 1) մշակվող շերտ
- 2) էլուստ
- 3) թողվածք
- 4) բազային շերտ

25

Տախտակի երկայնական լայն մակերևույթն անվանում են.

- 1) կող
- 2) եզրաշերտ
- 3) եզր
- 4) ճակատ

26

Մեխերի առանցքների հեռավորությունը մանրաթելերի ուղղությամբ պետք է լինի ոչ պակաս.

- 1) 10d
- 2) 15d
- 3) 5d
- 4) 4d

27

Ինչո՞վ են պատում տանիքի թիթեղները կոռոզիայից պաշտպանելու համար.

- 1) անագով և ցինկով
- 2) պղնձով
- 3) երկաթով
- 4) արույրով և ցինկով

28

Ի՞նչ հաստոցների միջոցով են ստանում տեսակավոր գլանվածքը.

- 1) ձուլման
- 2) կոման
- 3) գլոցման
- 4) դրոշմման

29

Ի՞նչ է չափանշումը.

- 1) ըստ գծագրի՝ նախապատրաստվածքի մակերևույթի վրա դետալի արտատպման գործողությունը
- 2) ըստ գծագրի՝ նախապատրաստվածքի մակերևույթի վրա դետալի եզրագծերի անցկացման գործողությունը
- 3) ըստ գծագրի՝ նախապատրաստվածքի մակերևույթի վրա դետալի մշակման ենթակա եզրագծերը ցույց տվող գծերի (խազերի) անցկացման գործողությունը
- 4) ըստ գծագրի՝ նախապատրաստվածքի մակերևույթի վրա դետալի եզրագծերի և մշակման ենթակա տեղամասերը ցույց տվող գծերի (խազերի) անցկացման գործողությունը

30

Ի՞նչ մետաղների համաձուլվածք է արույրը.

- 1) պղնձի և կապարի
- 2) պղնձի և անագի
- 3) պղնձի և բրոնզի
- 4) պղնձի և ցինկի

31

Թուջ կոչվում է այն համաձուլվածքը, որում ածխածնի պարունակությունը հավասար է.

- 1) 1,12 % -ից մինչև 5,67%
- 2) 2,14 % -ից մինչև 6,67%
- 3) 1,14 % -ից մինչև 5,67%
- 4) 2,12 % -ից մինչև 6,67%

32

Պողպատների ջերմամշակման հիմնական տեսակներն են.

- 1) թրծումը, բարելավումը, մխումը, մխամեղմումը
- 2) թրծումը, նորմալացումը, մխումը, մխամեղմումը
- 3) թրծաթողումը, նորմալացումը, մխումը, մխամեղմումը
- 4) թրծաթողումը, բարելավումը, մխումը, մխամեղմումը

33

Մեկ դյույմը հավասար է.

- 1) 25,4 մմ
- 2) 20,5 մմ
- 3) 24,5 մմ
- 4) 21,4 մմ

34

Փականագործական մետաղաստրոգի սոնցածապավենը շրջանակի մեջ տեղադրում են ատամներն ուղղված դեպի.

- 1) բռնակը
- 2) անշարժ գլխիկի ուղղությամբ
- 3) բռնակի հակառակ ուղղությամբ
- 4) բույթերը

35

Հատիչի սրման անկյունը պողպատներ հատելիս հավասար է.

- 1) 45° - 60°
- 2) 90°
- 3) 35° - 40°
- 4) 60°

36

Հատման ժամանակ տարբերում են մուրճով հարվածի հետևյալ տեսակները.

- 1) արմունկային և ազդրային
- 2) դաստակային, արմունկային և ուսային
- 3) արմունկային և ուսային
- 4) դաստակային, արմունկային և ազդրային

37

Խարտոցներն ըստ աշխատամասի 10 մմ երկարության վրա եղած ծրատվածքների թվի լինում են.

- 1) կոպտատաշ, մաքրատաշ, թավշյա
- 2) կոպտատաշ, մաքրատաշ, խաչաձև
- 3) կետային, մաքրատաշ, թավշյա
- 4) կոպտատաշ, մաքրատաշ, կետային

38

Ի՞նչ կտրիչից են օգտվում խառատային հաստոցով աստիճանավոր լիսեռներ մշակելիս.

- 1) ենթահատ
- 2) կտորահատ
- 3) անցահատ հենակային
- 4) անցահատ ուղիղ

39

Նախապատրաստվածքի մեկ պտույտի ընթացքում կտրիչի տեղափոխման մեծությանն անվանում են.

- 1) մատուցում
- 2) կտրման արագություն
- 3) հաճախություն
- 4) կտրման խորություն

40 Մետրական պարուրակների եռանկյուն պրոֆիլի գագաթի φ անկյունը հավասար է.

- 1) 55°
- 2) 60°
- 3) 90°
- 4) 45°

41 Ֆրեզերման ժամանակ մատուցում ասելով հասկանում են.

- 1) մշակվող նախապատրաստվածքի տեղաշարժը պտտվող ֆրեզի նկատմամբ
- 2) ֆրեզի պտտման հաճախականությունը
- 3) կտրման խորությունը
- 4) կտրման արագությունը

42 Ինչպե՞ս են անվանում այն սարքավորումը, որը փոխակերպում է էներգիան, նյութերը կամ տեղեկատվությունը.

- 1) աշխատանքի գործիք
- 2) մեխանիզմ
- 3) մեքենա
- 4) դետալ

43 Ըստ գործողության բնույթի մեքենաները լինում են.

- 1) դինամիկ
- 2) էներգետիկական
- 3) ստատիկ
- 4) էներգախնայող

44 Ո՞ր մեքենան աշխատանքային չէ.

- 1) տեխնոլոգիական
- 2) տրանսպորտային
- 3) էլեկտրաշարժիչ
- 4) փոխադրիչ

45 Էլեկտրական լարումը չափում են.

- 1) վոլտմետրով
- 2) ամպերմետրով
- 3) վատտմետրով
- 4) օհմմետրով

46

Վոլտմետրը էլեկտրական շղթային միացվում է.

- 1) ամպերմետրից հետո
- 2) հաջորդաբար
- 3) ամպերմետրից առաջ
- 4) զուգահեռ

47

Արմատապտղավոր բույսեր են.

- 1) տաքդեղ
- 2) գինձ
- 3) ճակնդեղ
- 4) դդմիկ

48

Հացահատիկային բույս չէ.

- 1) սոյա
- 2) աշորա
- 3) եգիպտացորեն
- 4) բրինձ

49

Մսամթերքի ջերմային մշակումը ո՞ր գործընթացի հիմնական մասն է.

- 1) քիմիական
- 2) տեխնոլոգիական
- 3) ֆիզիկական
- 4) տեխնիկական

50

Բանջարեղենի հիմնական խմբից չէ.

- 1) արմատաունդավոր
- 2) արմատապտղավոր
- 3) սոխուկավորներ
- 4) պտղաբանջարներ

51

Տերևաբանջարների թվին է պատկանում.

- 1) սեզատերև
- 2) նեխուր
- 3) անիսոն
- 4) ստեպղին

52 Ո՞ր վիտամինը չի համարվում ճարպալուծ.

- 1) K
- 2) A
- 3) D
- 4) C

53 Ո՞ր վիտամիններն են ամրացնում ոսկորները և լավացնում ինքնազգացողությունը.

- 1) D
- 2) A
- 3) E
- 4) B

54 Վիտամին A պարունակող սննդամթերք չէ.

- 1) թուրինջ
- 2) ձու
- 3) կարագ
- 4) կիվի

55 Շոգեեփն ի՞նչի միջոցով է պատրաստում ուտեստը.

- 1) ջրային բաղնիքի
- 2) տապակման
- 3) ծխահարման
- 4) միկրոալիքների

56 Ի՞նչ է կարվինգը.

- 1) հարմարադասում
- 2) դեկորատիվ ներկում
- 3) ձևավորման արվեստ
- 4) հարմարադրում

57 Պարզ ուսագծային կարվածքի գծագրի կառուցման համար անհրաժեշտ չափս է.

- 1) սեղմոնի լայնությունը
- 2) մեջքի երկարությունը մինչև գոտկատեղ
- 3) սեղմոնների երկարությունը
- 4) ներքին կարի երկարությունը

58 Մեջքի երկարության չափը մինչև գոտկատեղ վերցնում են.

- 1) յոթերորդ ողից մինչև գոտկատեղ
- 2) ութերորդ ողից մինչև գոտկատեղ
- 3) վեցերորդ ողից մինչև գոտկատեղ
- 4) հինգերորդ ողից մինչև գոտկատեղ

59 Ձեռքի շարժաբերով կարի մեքենայի մաս չէ.

- 1) սևեռիչ
- 2) թափանիվ
- 3) սեղմման թաթիկ
- 4) փոկ

60 Հագուստի գոտկային տեսակ չէ.

- 1) շրջագգեստ
- 2) տաբատ
- 3) կիսաշրջագգեստ
- 4) անդրավարտիք

61 Բնական մանրաթելի տեսակ չէ.

- 1) հանքային
- 2) բուսական
- 3) կենդանական
- 4) ացետատային

62 Ըստ պատրաստման հումքի գործվածքները լինում են.

- 1) ֆիզիկական և բուսական
- 2) բնական և քիմիական
- 3) քիմիական և տեխնոլոգիական
- 4) արհեստագործական և կենդանական

63 Ասեղնագործության հիմնական գործիքներից է.

- 1) կտուտիչ
- 2) քարգահ
- 3) թակ
- 4) քարկիթ

64 Ասեղնագործության մեջ օգտագործվող կարատեսակներից չէ.

- 1) շուլալակար
- 2) թելքաշ
- 3) ճյուղակար
- 4) եղնակար

65 Կարպետն ի՞նչով է տարբերվում գորգից.

- 1) թելախավով
- 2) զարդանախշերով
- 3) զարդաձևերով
- 4) գեղագարդումով

66 Կտուտիչը նախատեսված է.

- 1) թելը հանգուցելու և կտրելու համար
- 2) խավը խուզելու և հավասարեցնելու համար
- 3) գործվածքի շարքերը նստեցնելու համար
- 4) խավը սանրելու համար

67 Հայկական գորգի առանձնահատկություններից է.

- 1) կես հանգույցը
- 2) կրկնակի հնագույցը
- 3) մեկուկես հանգույցը
- 4) մեկ հանգույցը

68 Բրդե մանրաթելերի 96%-ը ստանում են.

- 1) այծի բրդից
- 2) ոչխարի բրդից
- 3) լամայի բրդից
- 4) ուղտի բրդից

69 Ըստ կառուցվածքի հագուստները լինում են.

- 1) գոտկային և կոնքային
- 2) ուսային և թևքային
- 3) ուսագծային և կոնքային
- 4) ուսային և գոտկային

70

Ի՞նչ է իրենից ներկայացնում հագուստի պատրաստման ժամանակ կիրառվող ձևանր.

- 1) բնական չափերով գծագիր
- 2) մեծացված չափերով գծագիր
- 3) տեխնիկական գծագիր
- 4) փոքրացված չափերով գծագիր

71

Մասնագիտության ընտրության բանաձևերից ո՞րն է ճիշտ.

- 1) ուզում եմ, կարող եմ, հնարավոր է
- 2) պահանջված է, պետք է, կարող եմ
- 3) ուզում եմ, կարող եմ, պետք է
- 4) պահանջված է, պետք է, ուզում եմ

72

Մասնագիտությունների դասակարգման ո՞ր խմբի ներկայացուցիչները գործ ունեն աշխատանքի անշունչ առարկաների, տեխնիկական միջոցների ստեղծման, մոնտաժի, հավաքման և կարգաբերման հետ.

- 1) մարդ-մարդ
- 2) մարդ-նշանային համակարգ
- 3) մարդ-կենդանի բնություն
- 4) մարդ-տեխնիկա

73

Նախագծի կատարման ո՞ր փուլում է տրվում տնտեսագիտական և էկոլոգիական գնահատական.

- 1) վերլուծական
- 2) կոնստրուկտորական
- 3) որոնողական
- 4) տեխնոլոգիական

74

Ի՞նչ է ուսումնասիրում տնտեսագիտությունը.

- 1) հասարակության առաջարկի ձևավորման մեխանիզմները
- 2) հասարակության գնողունակության բարձրացման օրինաչափությունները
- 3) հասարակության տնտեսական կյանքի զարգացման օրինաչափությունները
- 4) հասարակության պահանջարկի ձևավորման մեխանիզմները

75

Անձի նյութական կամ հոգևոր պահանջները բավարարելու անհրաժեշտությանն անվանում են.

- 1) շահույթ
- 2) եկամուտ
- 3) կարիք
- 4) բյուջե

76

Ի՞նչ է եկամուտը.

- 1) փող կամ նյութական արժեքներ, որոնք կարող են լինել աշխատավարձի, պարգևատրման կամ նվերի տեսքով՝ կատարված աշխատանքի կամ մատուցած ծառայության դիմաց
- 2) փող կամ նյութական արժեքներ, որոնք ապահովում են ապրանքների ձեռքբերումը
- 3) ընտանիքի կարիքների բավարարման համար նախատեսված ֆինանսական միջոցներ
- 4) անձի կարիքների բավարարման համար նյութական միջոցների ձեռքբերումը

77

Ո՞ր դեպքում է ընտանեկան բյուջեն հավասարակշռված.

- 1) երբ եկամուտները չեն գերազանցում ծախսերին
- 2) երբ եկամուտներն ու ծախսերը հավասար են
- 3) երբ եկամուտները գերազանցում են ծախսերին
- 4) երբ ծախսերը գերազանցում են եկամուտներին

78

Ի՞նչ է ձեռնարկատիրական գործունեությունը.

- 1) նոր մտահղացումների որոնումը
- 2) ապրանքների և ծառայությունների վաճառքն է որոշակի գնով, որն ապահովում է շահույթի համակարգված ստացում
- 3) ապրանքների և ծառայությունների ոլորտում բնակչության կարիքների բավարարումը
- 4) պետական բյուջեի համալրումը հարկային եկամուտներով

79

Տնտեսվարող սուբյեկտներ կարող են հանդիսանալ միայն.

- 1) անհատները
- 2) ֆիզիկական անձինք
- 3) ֆիզիկական և իրավաբանական անձինք
- 4) իրավաբանական անձինք

Ձեռնարկատիրական գործունեության կարևորագույն հատկանիշներն են.

- 1) նոր գաղափարների մշտական որոնում
- 2) նոր գաղափարների մշտական որոնում, ռիսկ, տնտեսական կախվածություն երկրի մակրոտնտեսական իրավիճակից
- 3) ռիսկ և անորոշություն, անկախություն և գործունեության ազատություն, հույս նորարարության վրա
- 4) անկախություն, նորարարության վրա հույս դնելը